Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի

անվան թիվ 2 հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝<< Մոտիվացիան, որպես ուսուցման կարևորագույն մաս>>

Ուսուցիչ՝ Աննա Թադևոսյան

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... - 3 -
Գլուխ 1 Մոտիվացիայի տեսական հիմքերը..... - 5 -
1.1Մոտիվացիա հասկացությունը և մոտիվացիայի վերաբերյալ մոտեցումները ... - 5 -
1.2 ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ..... - 5 -
Գլուխ 2 Մոտիվացիայի կարևորությունը մանկավարժության մեջ ... - 8 -
2.1 Սովորողի ուսումնառության տարիքային առանձնահատկությունները և մոտիվացիայի ձևավորումը ..... - 8 -
2.2 Մոտիվացիայի ձևավորումը տարրական դասարաններում..... - 10 -
Մոտիվացիայի բարձրացմանը նպաստող արտադասարանական և արտադպրոցական գործունեության կազմակերպման ձևերն ումեթոդները .....- 11 -
ՏՀՏ գործիքների օգտագործումը .....- 15 -
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ .....- 16 -
ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ.....- 16 -
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....- 18 -
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....- 19 -

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոտիվացիան համարվում է մարդու ցանկացած գործունեության կարևոր բաղադրիչ, այն ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը, իսկ ուսուցումը հասարակության մեջանհատի հաջող ռեալիզացման նախադրյալ է: Հետևաբար կարևոր է աշակերտի մեջզարգացնել ուսուցման հանդեպ մոտիվացիան: Աշակերտները կորցրել են ուսուցման հանդեպ իրենց մոտիվացիան: Այդ մոտիվացիան վերագտնելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ դրդապատճառներ են ընկած նրա ուսուցման հիմքում, ըստ այդմ մշակել ուսուցման արդյունավետ ձևերի և մեթոդների համակարգ:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ պարզելով աշակերտի մոտիվացիայի աղբյուրը , ուսուցիչները կկարողանան շատ ավելի արդյունավետ աշխատել դասարանում ՝ բարձրացնելով աշակերտների կրթության որակը: Կրթության մեջ աշակերտի մոտիվացիայի աղբյուր կարող է հանդիսանալ ուսուցչի կողմից լավ գնահատականի արժանանալը, ծնողների գովասանքին արժանանալը, տարիքակիցների հետ ցանկալի հարաբերություններ ձևավորելը, իսկ ավելի հասուն տարիքում դեռահասները կարևորում են անկախությունը, սեփական արժանապատվությունը հաստատելու ցանկությունը, իրենց ես-ը առաջնորդելու գաղափարը, իրենց ցանկություններն ու մտքերը արտահայտելու հնարավորությունը: Հետևաբար, այս ամենի բացակայությունն էլ պատճառ է հանդիսանում ուսումնական գործընթացում կրթական մոտիվացիայի նվազման ու անտարբերության:

Մոտիվացիան բարդ խնդիր է: Այն արժանի է հատուկ ուշադրության, քանի որ դրա ուսումնասիրությունն ուղղակիորեն կապված է որոնման հետ, մարդկային գործունեության աղբյուրները, այն շարժիչ ուժերը, որոնց շնորհիվ իրականացվում է ցանկացած գործունեություն, որոշվում է մարդու վարքի դրսևորումներով :

Ցանկացած գործունեության հիմքը մոտիվացիան է, որովհետև դրանից կախված է գործունեության մեջ անձի շահագրգռվածությունը, նրա գործունեությունը, նպատակասլացությունը, կենտրոնանալ սեփական կարիքները բավարարելու վրա և կյանքի կողմնորոշման որոշմանը.Ականավոր հոգեբույժ, նյարդաբան և հոգեբան Վ.Ն. Մյասիշչևն ասել է, որ արդյունքը, որին մարդը հասնում է իր կյանքում, ընդամենը 20-30% է. կախված է նրա ինտելեկտից, իսկ 70-80%-ը՝ նրան դրդող շարժառիթներից վարվել որոշակի ձևով:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել մոտիվացիայի տեսական հիմքերը, ինչպես նաև բացահայտել և ցույց տալ տարբեր տարիքային առանձնահատկություններ ունեցող աշակերտների մեջ մոտիվացիայի զարգացման կարևորությունը ուսուցման որակի բարձրացման

գործում:

Այսպիսով, հետազոտական աշխատանքում կսահմանենք, թե ինչ է մոտիվացիան, ինչպիսի առանձնահատկություններ ունի, կանդրադառնանք մոտիվացիայի տեսակներին ու մակարդակներին, կփորձենք բացահայտել և ներկայացնել աշակերտների տարիքային առանձնահատկություններն ու սովորելու մոտիվները և վերջում կգանք այն եզրահանգման,որ մոտիվացիան ուսուցման կարևորագույն նախադրյալներից մեկն է, և որ ուսուցիչները կարող են հասնել ցանկալի վերջնարդյունքների միայն այն դեպքում, երբ բացահայտեն յուրաքանչյուր աշակերտի ուսուցման դրդապատճառներն :

Գլուխ 1 Մոտիվացիայի տեսական հիմքերը

1.1Մոտիվացիա հասկացությունը և մոտիվացիայի վերաբերյալ մոտեցումները

Մարդկային վարքի մոտիվացիայի խնդիրը հետաքրքրել է գիտնականներին դեռևս շատ վաղուց: Բազմաթիվ փիլիսոփաների ու գիտնականների աշխատություններում կարող ենք հանդիպել մոտիվացիայի վերաբերյալ շատ տեսություններ:

Մոտիվացիան առաջացել է լատիներեն <<movere>> բառից, որը թարգմանաբար նշանակում է շարժվել: Տերմինն առաջին անգամ օգտագործել է Ա. Շոպենհաուերը իր «Բավարար պատճառի չորս սկզբունքներ» հոդվածում: Մոտիվացիայի վերաբերյալ կարող ենք հանդիպել բազմաթիվ սահմանումների, ինչպիսին է՝ <<Մոտիվացիան մարդու կողմից այս կամ այն վարքագծի գիտակցված ընտրության գործընթացն է>>:

Մոտիվացիայի հիմնական տեսությունները ձևավորվել են 19-րդ դարի երկրորդ կեսերից: Էվոլուցիոն տեսության հիմնադիր Չ. Դարվինը առաջիններից մեկն էր, ով ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ մարդու և կենդանիների մոտ առկա են բազմաթիվ ընդհանուր պահանջմունքներ և վարքի ձևեր: Այս տեսության ազդեցության տակ էլ հոգեբանության մեջ սկսվեց ինտենսիվորեն ուսումնասիրվել կենդանիների և մարդու բնազդները :

Խոսելով մոտիվացիայի տեսությունների մասին, մենք չենք կարող չանդրադառնալ անձի պահանջմունքներին: Ամերիկացի հետազոտող Հ. Մյուրեյը առաջարկում էր մարդկային պահանջմունքների մի դասակարգում, որտեղ օրգանական կամ առաջնային պահանջմունքներից բացի, կային նաև կրթությունից և վերապատրաստումից բխող երկրորդական պահանջմունքներ՝ դրանց թվում առանձնացնելով մոտ երկու տասնյակ պահանջմունքներ (հաջողության հասնելու, պատկանելիության, ագրեսիայի, անկախության, ընդդիմության, հարգանքի, պաշտպանության, գերիշխանության, ուշադրության գրավման, ձախողումից խուսափելու և այլն): Հետևաբար, ըստ Հ. Մյուրեյի այս պահանջմունքները մարդկանց համար հանդիսանում էին մոտիվացիայի աղբյուրներ:

1.2 ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Մոտիվն այն է, ինչը դրդում է մարդուն գործողության: Չիմանալով մոտիվները՝ հնարավոր չէ հասկանալ, թե մարդն ինչու է ձգտում այս կամ այն նպատակին: Ներկայիս հոգեբանության մեջ օգտագործվում են մոտիվացիայի տարբեր դասակարգումներ՝ ներքին և արտաքին, դրական և բացասական, կայուն և անկայուն, ինչպես նաև ճանաչողական, սոցիալական և այլն:

Ներքին մոտիվացիայի դեպքում աշակերտի խրախուսման շարժառիթները բխում են ներսից, կապված են իր սեփական հետաքրքրությունների, հույզերի և ցանկությունների

հետ: Հետաքրքրվելով ինչ-որ բանով՝ աշակերտը ոգևորվում է, հետաքրքրության օբյեկտի հետ աշխատելիս դժվարություններ չի ունենում և փոխհատուցում չի պահանջում: Սա պայմանավորված է նրանով, որ տվյալ աշակերտը իրեն հանձնարարված աշխատանքը չի կատարում ուսուցչից շնորհակալություն կամ գովասանք ստանալու նկատառումով, այլ կատարում է, քանի որ գիտակցում է, որ դա իր պարտականությունն է որպես աշակերտ և կրթությունը անհրաժեշտ է իրեն հետագա նպատակներին հասնելու համար: Ներքին մոտիվացիա ունեցող մարդիկ բավարարվածություն են ստանում բուն գործողությունից և դրա կատարումից և ակնկալիքներ չունեն արտաքին աշխարհից:

Առանձնացնենք ներքին մոտիվացիան խթանող մի քանի գործոններ՝

1 **Մարտահրավեր** Աշակերտները մոտիվացվում են, երբ փորձում են հասնել մի նպատակի, որը բխում է իրենց անձնական հետաքրքրություններից, կապված է ինքնագնահատականի բարձրացման հետ, որտեղ գործողության արդյունքը հասանելի է և նպատակին հասնելը հնարավոր է, բայց ոչ շատ հեշտ:

2 **Հետաքրքրություն** Սովորողի ներքին մոտիվացիան բարձրանում է, երբ ֆիզիկական միջավայրում ինչ-որ բան գրավում է նրա ուշադրությունը և ցանկություն է առաջանում սովորել ավելին:

3 **Վերահսկողություն** Աշակերտները մոտիվացվում են, երբ իրենք են վերահսկում իրենց միջավայրը և սահմանում են հստակ նպատակներ, դրանց վրա աշխատելու տեմպը և այն ուղղությունը, որով շարժվելու են: Ցավոք, ավանդական կրթական համատեքստում վերահսկողության այս զգացումը գործնականում գոյություն չունի:

4 **Համագործակցություն ,մրցակցություն** Ներքին մոտիվացիան կարող է բարձրանալ այնպիսի իրավիճակներում, երբ սովորողը բավականություն է ստանում մեկ ուրիշին օգնելուց, ինչպես նաև այն դեպքերում , երբ կարողանում է համեմատել իր և մյուսների կատարած աշխատանքը, որտեղ ինքն ավելի շահեկան դիրքերում է:

5 **Ճանաչում/Ընդունում** Աշակերտները սիրում են, երբ իրենց կատարած աշխատանքը և գրանցած հաջողությունները ճանաչվում և ընդունվում են ուսուցիչների, ծնողների ու դասընկերների կողմից:

6 **Նշանակալի ուսուցում** Աշակերտի մոտիվացիայի մեկ այլ կարևոր գործոններից է «նշանակալի ուսուցումը»: Այս ֆենոմենը վերաբերում է գիտելիքների կամ հմտությունների ձեռքբերմանը, որոնք կարող են օգտակար լինել աշակերտի համար իր առօրյա կյանքում, կապված լինել իր առօրյա մտահոգությունների հետ:

Արտաքին մոտիվացիայի դեպքում սովորողի խրախուսման շարժառիթները գալիս են արտաքին աշխարհից, աշխատանքը կատարվում է ակնկալիքով, որ լինելու է սպասված պարգևատրումը՝ նյութական կամ ոչ նյութական (պատվոգիր, մրցանակ, նվեր, գովաբանում, լավագույն աշակերտի կոչում և այլն) ինչպես նաև, որպեսզի բավարարվեն շրջապատի մարդկանց (ծնողներ, ուսուցիչներ, դասընկերներ) պահանջները: Ուսուցչի գործն ավելի արդյունավետ կլինի, եթե կարողանա արտաքին մոտիվացիա ունեցող աշակերտների մոտ արթնացնել ներքին մոտիվացիա:

Եթե մոտիվացիան դիտարկենք երեխայի հուզական ընկալման տեսանկյունից, ապա այն լինում է 2 տեսակի՝ **դրական** և **բացասական**: Դրական մոտիվացիան դրսևորվում է գովաբանությունների, պարգևատրումների, արտոնությունների տեսքով՝ ուղեկցվում է դրական հույզերով՝ ուրախություն, հաճույք: Բացասական մոտիվացիան մտրակն է՝ պատիժների, պահումների, քննադատության տեսքով, որին ավելանում են բացասական հույզերը և զգացմունքները՝ վախ, տհաճություն, զայրույթ: Այստեղ կարևոր է այն դիտարկումը, որ մոտիվացիայի մշտական կիրառումը կարող է կորցնել իր ազդեցությունը:

Մոտիվացիայի հաջորդ դասակարգումն է՝ **կայուն** և **անկայուն**: Կայուն է համարվում այն մոտիվացիան, որը հիմնված է մարդու պահանջմունքների վրա, քանի որ այն լրացուցիչ ամրապնդում չի պահանջում, և հետևաբար, անկայուն է այն մոտիվացիան, որը պահանջում է լրացուցիչ ամրապնդում:

Որպես մոտիվացիայի տեսակներ կարելի է առանձնացնել **ճանաչողական** և **սոցիալական** մոտիվներ: Ուսումնական առարկայի բովանդակության հանդեպ հետաքրքրությունը խոսում է ճանաչողական մոտիվների առկայության մասին: Ուսման ընթացքում այլ մարդկանց հանդեպ հետաքրքրությունն էլ խոսում է սոցիալական մոտիվների մասին:

Ե՛վ ճանաչողական, և՛ սոցիալական մոտիվները կարող են ունենալ տարբեր մակարդակներ: Ճանաչողական մոտիվները լինում են լայն ճանաչողական (կողմնորոշում դեպի նոր գիտելիքներ, փաստեր, երևույթներ), ուսումնաճանաչողական (գիտելիքի ձեռքբերման տարբերակների հանդեպ հետաքրքրություն, ինքնուրույն գիտելիքի ձեռքբերման փորձեր), ինքնակրթվելու (լրացուցիչ գիտելիքներ ստանալու և ինքնակատարելագործման ծրագրի կառուցման հակումներ):Սոցիալական մոտիվները կարող են ունենալ հետևյալ մակարդակներ՝ լայն սոցիալական մոտիվներ (պարտավորվածություն և պատասխանատվություն), նեղ սոցիալական կամ դիրքային մոտիվներ (շրջապատի հանդեպ հստակ դիրք զբաղեցնելու և նրանց կողմից ընդունվելու ձգտում), սոցիալական համագործակցության մոտիվներ (այլ մարդկանց հետ փոխազդեցության տարբեր ձևերի հանդեպ հակում):

Ուսումնական մոտիվացիան ուղղորդում և աջակցում է ուսումնական գործունեության իրականացմանը: Սա իրենից ներկայացնում է մի բարդ , համապարփակ համակարգ, որը ձևավորում է շարճառիթների, նպատակների անհաջողության արձագանքների,հաստատակամության և սովորողների տեղորոշման համար: Մոտիվները ձևավորում են սովորողի բնավորության առանձնահատկություններով : Սովորողնի ուսումնական մոտիվացիան կարող է տարբեր լինել,կախված նրանց տարիքից և նույնիսկ տրամադրությունից: Ուսումնասիրելով մոտիվացիայի տեսական հիմքերը՝ պարզեցինք, որ մոտիվացիան ունի նաև 5 մակարդակներ: Դրանք են՝

1.**Դպրոցում սովորելու մոտիվացիայի բարձր մակարդակ**: Այսպիսի երեխաներն ունեն ճանաչողական մոտիվ, ձգտում են հնարավորինս լավ կատարել դպրոցում հանձնարարված բոլոր առաջադրանքները: Աշակերտները հստակ հետևում են ուսուցչի բոլոր հրահանգներին, բարյացակամ են և պատասխանատու, շատ են մտահոգվում, եթե չեն ստանում բավարար գնահատական:

2.**Լավ դպրոցական մոտիվացիա**: Աշակերտները հաջողությամբ հաղթահարում են ուսումնական գործընթացը: Մոտիվացիայի նման մակարդակը համարվում է միջին նորմ:

3.**Դրական վերաբերմունք դպրոցին**: Այս երեխաներին դպրոցը գրավում է ոչ կրթական գործունեությամբ: Երեխաները բավականին լավ են զգում իրենց դպրոցում, քանի որ շփվում են ընկերների և ուսուցիչների հետ: Նրանց դուր է գալիս աշակերտ լինելու ինքնազգացողությունը՝ ունենալով դպրոցական պայուսակ, բազմազան գրենական պիտույքներ և այլն: Ճանաչողական մոտիվներն այս երեխաների մոտ ձևավորված են նվազագույն մակարդակով, և ուսումնական գործընթացը քիչ է գրավում:

4.**Ցածր դպրոցական մոտիվացիա**: Այս երեխաները անտարբերությամբ են այցելում դպրոց, նախընտրում են բաց թողնել դասերը: Դասաժամերին հաճախ զբաղվում են կողմնակի գործերով, խաղերով: Լուրջ դժվարությունների են բախվում ուսումնական գործընթացում, գտնվում են դպրոցում լուրջ ադապտացիոն փուլում:

5.**Բացասական վերաբերմունք դպրոցի հանդեպ, դեզադապտացիա**: Այսպիսի երեխաները լուրջ խնդիրներ ունեն սովորելու հետ: Նրանք չեն կարողանում սովորել, խնդիրներ են ունենում համադասարանցիների ու ուսուցիչների հետ: Դպրոցը շատ հաճախ նրանց կողմից ընկալվում է որպես թշնամական միջավայր, որտեղ գտնվելը դառնում է անտանելի: Աշակերտները կարող են ագրեսիվորեն դրսևորել իրենց, հրաժարվում են կատարել առաջադրանքները, չեն հետևում այս կամ այն նորմերին ու կանոններին: Հաճախ նման դպրոցականների մոտ նկատվում են նյարդահոգեբանական խախտումներ:

Գլուխ 2 Մոտիվացիայի կարևորությունը մանկավարժության մեջ

2.1 Սովորողի ուսումնառության տարիքային առանձնահատկությունները և մոտիվացիայի ձևավորումը

Տարրական դասարանների ուսուցիչները պնդում են, որ աշակերտների մոտ ուսման մոտիվացիան նվազել է կամ իսպառ բացակայում է: Երեխաները չեն ցանկանում սովորել, անտարբերություն են ցուցաբերում գիտելիքների, գնահատականների նկատմամբ, չեն ձգտում նոր բաներ սովորել:Դպրոցում աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ եթե երեխան երկու-երեք ամիս տևողությամբ որևէ հարցում կայուն դժվարություն ունի և այս դժվարությունը որևէ կերպ, որևէ ազդեցությամբ փոփոխության չի ենթարկվում, վիճակը չի բարելավվում, ուրեմն մենք գործ ունենք խնդրի հետ, որը պետք է ինչ-որ կերպ

հաղթահարել կամ բացահայտել խնդրի առաջացման պատճառները: Ուսումնական խնդիրների պատճառները կարող են լինել **ֆիզիոլոգիական, սոցիալական** և **հոգեբանական**:

Ֆիզիլոգիական պատճառները երեխայի առողջության տարբեր առանձնահատկություններն են՝ երեխայի տարած հիվանդությունները, վիրահատությունները, երեխայի շարժողական ակտիվության մակարդակը, երեխայի նյարդային համակարգի տիպը և դրա առանձնահատկությունները, երեխայի դիմադրողական մակարդակը:

Սոցիալական պատճառները կարող են լինել ընտանիքում երեխայի փոխհարաբերությունները, անբարենպաստ դաստիարակության մեթոդները, ծնողների ոչ պատվաբեր վարքը և վերաբերմունքը երեխայի նկատմամբ, ընտանեկան լուրջ կոնֆլիկտները, ինչպես նաև երեխայի փոխահարբերությունները իր հասակացիների հետ:

Հոգեբանական պատճառները երեխայի ինտելեկտուալ առանձնահատկություններն ու կարողություններն են՝ նրա հիշողության, մտածողության, ուշադրության առանձնահատկությունները:

Այս երեք պատճառների համախումբը ստեղծում է ուսումնական դժվարություններ: Ուսումնական դժվարությունները կարող են արտահայտվել երկու ձևով կամ երկու ոլորտում՝

Առաջինը հենց բուն ուսումնական առանձնահատկությունների խնդիրներն են: Այսինքն՝ երեխան ձախողում է կոնկրետ առարկայի շրջանակներում, չի կարողանում ընկալել, յուրացնել, դժվարանում է կատարել հանձնարարությունները, հասկանալ, բացատրել իր մտքերը:

Երկրորդ խնդիրը անձնային որակների դաշտից է: Այսինքն՝ երեխայի մոտ կարող է դրսևորվել ինքնուրույնության պակաս, նախաձեռնողականության պակաս, հրահանգներով աշխատելու կարողության պակաս կամ ենթարկվելու դժվարություններ:

Այսպիսով, մենք հասկանում ենք, որ ուսումնական մոտիվացիան շատ կարևոր առանձնահատկություն է, որը ձևավորվում է մի շարք այնպիսի գործոնների

ազդեցությամբ, ինչպիսիք են ծնողների վերաբերմունքը, մանկապարտեզը, ինչպես նաև հենց բուն ուսումնական միջավայրը՝ դպրոցը, ուսուցիչները, ուսումնական նյութերը: Ուսումնական մոտիվացիան ևս անձնային ոլորտի խնդիր է, և եթե, օրինակ, երեխան ունի բարձր ընդունակություններ, բայց չունի ուսումնական մոտիվացիա, սա ևս կարող է պատճառ հանդիսանալ, որպեսզի երեխան ունենա ուսումնական դժվարություններ: Կարևոր է հաշվի առնել, որ հաջողության զգացումը, հաջողության ձգտելու ցանկությունը և հաջողության հասնելու մոտիվացիան ձևավորվում է հենց դպրոցական տարիքում:

2.2 Մոտիվացիայի ձևավորումը տարրական դասարաններում

Երեխայի կյանքի զարգացման ընթացքում ունենք շրջաններ, երբ կոնկրետ որակներ են ձևավորվում և տարրական դպրոցի տարիքը հենց հաջողության հասնելու մոտիվացիայի ձևավորման տարիքն է: Դրանից հետո այս մոտիվացիան և նպատակասլացությունը ձևավորելը շատ դժվար կլինի: Հոգեբանների կարծիքով ծնողները մեծ դերակատարում ունեն երեխային մոտիվացնելու գործում: Հետևաբար անհրաժեշտ է ապագա աշակերտի մոտ զարգացնել ուսուցման այնպիսի մոտիվներ, ինչպիսիք են.

1.սովորելու և գիտելիքներ ձեռք բերելու ցանկություն,

2.վայելել ուսուցման գործընթացը,

3.դպրոցում ակադեմիական հաջողությունների ձգտում,

4.առաջադրանքների ճիշտ և ջանասիրաբար կատարման ձգտում,

5.դասընկերների և ուսուցիչների հետ դրական հաղորդակցության ձգտում,

6.դպրոցի պահանջներին ենթարկվելու ունակություն,

7.ինքնատիրապետման հմտություններ

ՈՒսուցիչը ծնողի հետ հավասար ունի կարևոր դերակատարում աշակետի ուսուցման մոտիվացիայի բարձրացման գործում: Եկեք խոսենք մի շարք ռազմավարությունների մասին, որոնք դրդում են տարրական դասարանում սովորող աշակերտին մոտիվացվել: Դրանք հետևյալն են՝

1.խրախուսել աշակերտին դպրոցում լավ վարքագիծ դրսևորելու համար,

2.դասերը դարձնել մասնակցային, ներառական և հանդուրժող. աշակերտը կարող է մասնակցել առանց քննադատության կամ ծաղրի ենթարկվելու վախի,

3.տալ մրցանակներ կարճ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ նպատակների իրականացման համար,

4.վերլուծել հնարավոր հաջողությունների ու անհաջողությունների պատճառները,

5.օգտագործել խմբային աշխատանքը որպես միջոց բոլորին դասին ներգրավելու հարմար,

6.ուսուցումը հարմարեցնել տարբեր կարողություններ ունեցող աշակերտներին՝ չմոռանալով թույլ կարողություններ ունեցող աշակերտներին, քանի որ հենց նրանք են պահանջում ավելի մեծ ուշադրություն և բարձր մոտիվացիա:

Այսպիսով, հաջող ուսուցումն առանց մոտիվացիայի անհնար է, որովհետև ուսումնասիրելով այս թեման կարող ենք ասել, որ հետաքրքրասերների համար հաջող ուսումնառությունն ավելի բարձր է, քան ինտելեկտով սովորողի:

Մոտիվացիայի բարձրացմանը նպաստող արտադասարանական և արտադպրոցական գործունեության կազմակերպման ձևերն ումեթոդները

Արտադասարանական և արտադպրոցական գործունեության

կազմակերպման հետևյալ ձևերն ու մեթոդները նպաստում են մոտիվացիայի բարձրացմանը.

- էքսկուրսիաներ
- կոլեկտիվ ստեղծագործական աշխատանք
- խաղային գործունեություն
- թեմատիկ երեկոներ

- վիկտորինաներ, օլիմպիադաներ

- դպրոցական համերգներ և մրցույթներ

- տոների անցկացումը՝ «Մայրության օր», «Ամանոր», «Մարտի 8»,

«Հաղթանակի օր» և այլն:

Ծնողները պետք է ներգրավվեն գործընթացում: Երեխաներին իսկապես անհրաժեշտ է, որ ծնողները տեսնեն իրենց ձեռքբերումները և հպարտանան դրանցով: Ծնողները պետք է հրավիրվեն վերը նշված միջոցառումներին:

Գնահատումը մեծ նշանակություն ունի կրթական գործունեության մոտիվացիայի ձևավորման գործում: Ուսուցիչները, այն պահից, երբ երեխան մտնում է դպրոց, հաճախ թվանշանը օգտագործում են որպես խթանող գործիք, որպես աշակերտին ակտիվ աշխատելու խրախուսելու միջոց: Այս դեպքում թվանշանը ծածկում է նրա գործունեության իրական արժեքը: Աշակերտների գործունեությունը, որը պատշաճ կերպով չի ապահովվում ճանաչողական կարիքով և հետաքրքրությամբ, ուղղված իր արտաքին հատկանիշներին, գնահատմանը, դառնում է անբավարար արդյունավետ: Սա հանգեցնում է նրան, որ շատ սովորողների համար գնահատականը դադարում է խթանիչ դեր խաղալ, և այդ ժամանակ ուսումնական աշխատանքն ինքնին կորցնում է իրենց արժեքը: Ուսումնական գործունեության դրական կայուն մոտիվացիա ձևավորելու համար կարևոր է, որ սովորողի աշխատանքը գնահատելիս հիմնականում կատարվի այդ աշխատանքի որակական վերլուծությունը՝ ընդգծելով բոլոր դրական կողմերը, ուսումնական նյութի մշակման առաջընթացը և բացահայտելու պատճառները՝ առկա թերությունները, և ոչ միայն դրանք նշելը: Այս որակական վերլուծությունը պետք է ուղղված լինի երեխաների մոտ աշխատանքի համարժեք ինքնագնահատականի, դրա արտացոլման զարգացմանը: Միավորը պետք է երկրորդական տեղ զբաղեցնի ուսուցչի գնահատողական գործունեության մեջ:

Անբավարար գնահատականները պետք է հատկապես ուշադիր օգտագործվեն ընթացիկ գնահատման մեջ, իսկ ուսուցման սկզբում ավելի լավ է դրանք ընդհանրապես չօգտագործել: Փոխարենը պետք է ուղղակի մատնանշել աշխատանքի բացերը՝ նշելով, որ երեխան չգիտի այս ու այն, դեռևս չի սովորել, չի կարողանում: Ուսումնական նպատակներին հասնելու, ուսումնասիրվող առարկայի մոտիվացիայի բարձրացման համար դպրոցականների ընդգրկումը կրթական և ճանաչողական գործունեության մեջ ապահովվում է ակտիվացման միջոցներով, որոնք են կրթության բովանդակությունը, ժամանակակից կրթական մեթոդներն ու ձևերը: Դրանք ուղղված են բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծմանը, որն աջակցում է սովորողների ճանաչողական գործունեությանը, մասնավորապես.

- սովորողների ներգրավումը կոլեկտիվ գործունեության ձևերում.
- սովորողների ներգրավումը գնահատման աշխատանքներին և համարժեք ինքնագնահատականի ձևավորումը.
- սովորողների և ուսուցչի միջև համագործակցություն, համատեղ ուսումնական գործունեություն.
- ստեղծագործական մթնոլորտի ստեղծում,
- ուսումնական նյութի զվարճալի ներկայացում:

Ուսումնական գործընթացում ուսուցման մեթոդների կիրառմանը զուգընթաց

անհրաժեշտ է կիրառել ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ:

1. Աշակերտակենտրոն ուսուցման կիրառումը ենթադրում է «աշակերտի ճանաչումը որպես հիմնական գործող գործիչ ողջ ուսումնական գործընթացում, ողջ ուսումնական գործընթացը հիմնված է այս հիմնական դիրքորոշման վրա:

Աշակերտակենտրոն ուսուցման տեսակներից մեկը խմբային աշխատանքն է: Այն ամենից լավ է օգնում զարգացնել սովորողների հաղորդակցական կարողությունները և օգնում է բարձրացնել սովորելու մոտիվացիան: Խմբային աշխատանքում ուսուցումը յուրաքանչյուր սովորողի անհատական գործունեությունից վերածվում է համատեղաշխատանքի:

2. Խնդրահարույց ուսուցումը գրավում է ցանկացած դաս կառուցելու նոր հնարավորություններով, որտեղ սովորողները չեն մնում պասիվ ունկնդիրներ և կատարողներ, այլ վերածվում են կրթական խնդիրների ակտիվ հետազոտողների:

Ուսումնական գործունեությունը դառնում է ստեղծագործ: Երեխաները ավելի լավ են

սովորում ոչ թե այն, ինչ պատրաստ են ստանում և անգիր անում, այլ այն, ինչ իրենք են հայտնաբերել և արտահայտել իրենց ձևով: Որպեսզի այս տեխնոլոգիայի կիրառմամբ ուսուցումը չկորցնի գիտական բնույթի սկզբունքը, ես անպայման հաստատում և համեմատում եմ աշակերտների եզրակացությունները կանոնների, դասագրքերի, բառարանների և հանրագիտարանային հոդվածների տեսական դրույթների հետ: Խնդրի վրա հիմնված ուսուցման այս մեթոդը ունիվերսալ է, քանի որ այն կիրառելի է ցանկացած առարկայի բովանդակության և կրթության ցանկացած մակարդակի համար:

3. Խաղային մեթոդներ: Դասարանում ուսուցման խաղային ձևերը ուսուցչի և աշակերտի փոխգործակցության արդյունավետ կազմակերպումն է: Խաղը ստեղծագործություն է, խաղը՝ աշխատանք: Խաղի ընթացքում սովորողների մոտ ձևավորվում է կենտրոնանալու, ինքնուրույն մտածելու, ուշադրություն զարգացնելու, գիտելիքի ձգտումը: Սովորողները չեն նկատում, որ խաղի ընթացքում սովորում են. սովորել, հիշում են նոր բաներ, նավարկվում են անսովոր իրավիճակներում, զարգացնում են հմտությունները, երևակայությունը: Աշակերտներից նույնիսկ ամենապասիվները մեծ ցանկությամբ են ընդգրկված խաղում:

4. Քննադատական մտածողությունը զարգացնում է հաղորդակցական իրավասությունները, տեղեկատվություն գտնելու և վերլուծելու կարողությունը,

սովորեցնում է մտածել օբյեկտիվ և բազմազան: Քննադատական մտածողության նպատակն է երեխային սովորեցնել ինքնուրույն մտածել և տեղեկատվություն փոխանցել, որպեսզի ուրիշներն իմանան այն, ինչ նա հայտնաբերել է իր համար: «Քննադատական մտածողության» տեխնիկայի վրա կառուցված դասերը խրախուսում են երեխաներին ինքնուրույն հարցեր տալ և ակտիվացնել նրանց՝ պատասխան փնտրելու համար:

5. Առողջապահական տեխնիկան աշակերտին հնարավորություն են տալիս դպրոցում սովորելու ընթացքում պահպանել առողջությունը, նրա մեջ ձևավորել առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ և ստացած գիտելիքները կիրառել առօրյա կյանքում: Նման տեխնոլոգիաները կիրառվում են դասի բոլոր փուլերում, քանի որ դրանք

նախատեսում են գործունեության հստակ փոփոխություն: Որպեսզի երեխաները չհոգնեն դասին, անհրաժեշտ է իրականացնել ֆիզիկական վարժություններ և հատուկ վարժություններ մկանային-կմախքային համակարգի մկաններից լարվածությունը թոթափելու համար, վարժություններ ձեռքերի և մատների համար, վարժություններ ճիշտ շնչառություն ձևավորելու համար, վարժություններ բարելավելու տեսողությունը:

ՏՀՏ գործիքների օգտագործումը

Ներկայումս ուսուցիչների մասնագիտական գործունեության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նորարարական տեխնոլոգիաները: Ուսուցիչների աշխատանքում ՏՀՏ գործիքների օգտագործման անհրաժեշտությունը թելադրված է աշակերտների տարիքային առանձնահատկություններով, մասնավորապես ուսումնական նյութի, գործընթացների և երևույթների տեսողական ցուցադրման անհրաժեշտությամբ: Այսօր ՏՀՏ-ն կարելի է համարել որպես գիտելիքների փոխանցման նոր միջոց, որը համապատասխանում է երեխայի կրթության և զարգացման որակապես նոր բովանդակությանը: Այս մեթոդը թույլ է տալիս երեխային հետաքրքրությամբ ուսումնասիրել, գտնել տեղեկատվության աղբյուրներ, զարգացնել անկախություն և պատասխանատվություն նոր գիտելիքներ ձեռք բերելու հարցում:

Մուլտիմեդիա գործիքները հնարավորություն են տալիս, համեմատած այլ տեխնիկական ուսուցման միջոցների, ապահովել տեսանելիության սկզբունքի լավագույն ներդրումը, որն առաջատար տեղ է զբաղեցնում տարրական դպրոցի կրթական տեխնոլոգիաներում: Բացի այդ, մուլտիմեդիա գործիքներին տրվում է

դասի խաղային ձևերի արդյունավետ աջակցություն ցուցաբերելու խնդիր:

Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը դասարանում թույլ է տալիս դասը դարձնել ոչ ավանդական, պայծառ, հարուստ: Նման դասերը թույլ են տալիս նաև ցույց տալ առարկաների կապը, սովորեցնել տեսական գիտելիքները գործնականում կիրառել, մշակել համակարգչային հմտություններ, ակտիվացնել ուսանողների մտավոր գործունեությունը: Սա հասնում է մոտիվացիոն նպատակին՝ հետաքրքրություն առաջացնել առարկայի ուսումնասիրության նկատմամբ և ցույց տալ դրա կարիքը իրական կյանքում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Իրավիճակի ներկայացում և վերլուծություն

Իրավիճակ 1

Դասարանում աշխատանքներ կատարելու ընթացքում մանկավարժները իրենց գործունեությունը անմիջականորեն չեն կատարում:Նրանք միգուցե իրենց գործն ավելի հեշտ դարձնելու համար հանձնարարված առաջադրանքները իրենք են կատարում և թույլ չեն տալիս երեխաներին ինքնուրույն աշխատել:Իրենց այս քայլով նրանք երեխաների մոտ խաթարում են ինքնուրույն մտացելու,ինքնակատարելագործվելու և ինքնաճանաչման ձգտմանը:Երեխաները դադարում են մտածելու կարողություն ունենալուց,նրանք կորցնում են ինքնուրույն մտածելու և ինքնուրույն աշխատելու ունակությունը:Յուրաքանչյուր երեխա պետք է ունենա իր սեփական գիտելիքը և տեսակետները տարբեր հարցերի վերաբերյալ:

Իրավիճակի լուծում

Որպես մանկավարժ նրանք պետք է թողնեն, որ երեխաները ինքնուրույն կատարեն իրենց տնային աշխատանքները:Սխալների դեպքում նրանք կարող են ընդամենն ուղղել, շտկել նրանց սխալները:Այդպես երեխաները կհասկանան իրենց սխալները և կուղղեն դրանք՝իրենց սխալների վրա սովորելով ճիշտը:Նրանք կարող են սովորել նաև դառնալ ինքնուրույն և ինքնուրույն հասկանալ իրենց սխալները:

Իրավիճակ 2

Հաջորդ իրավիճակը երեխաների մեջ խտրականություն դնելու,նրանց իրարից առանձնացնելու մասին է:Կազմակերպվելիք միջոցառումներում մասնակցություն են ունենում մշտապես,գրեթե,նույն անդամները:Սա կարող է ունենալ երկու բացասական կողմ:Առաջինն այն է,որ այդ մշտական մասնակիցների մոտ կարող է առաջանալ գերես:Նման մարդիկ իրենց սեփական ես-ը վեր են դասում ամեն ինչից,և իրենց տարբերվող են զգում,որպես ամենալավը:Հաջորդ բացասական կողմն այն է,որ մյուս առանձնացված երեխաների մոտ կնկատվի ինքնագնահատականի կտրուկ անկում:Նրանք չեն էլ փորձի հետագայում որևէ հստակ քայլ կատարել իրենց կյանքում:

Իրավիճակի լուծում

Անհրաժեշտ է կազմակերպել փոքրամասշտաբ միջոցառումներ հասկանալու համար,որ բոլոր երեխաներն էլ շնորհալի են,և ունակ են իրենց ուսերին վերցնել միջոցառմանը մասնակցելու պատրաստակամությունը:Այսպես մանկավարժը կօգնի և՛ շնորհալիներին, որպեսզի նրանց ես-կոնցեպցիան չկործանի իրենց, և՛ մեկուսացվածներին,որպեսզի նրանց ինքնագնահատականն ավելի բարձրանա:

ԻՐԱՎԻՃԱԿ 3

4-րդ դասարանի մի աշակերտ սիստեմատիկորեն չէր կատարում տնային առաջադրանքները, նույնիսկ չէր փորձում բացել իր տետրը դասի ժամանակ : Ուսուցիչը պարբերաբար, ամեն օր, 2 էր դնում օրագրում և դասամատյանում: Մի օր ուսուցիչն ասաց. «Արա՛մ, դու այսօր էլ երկու ստացար ,ամեն օր երկու կստանաս և այդպես կմնա այնքան ժամանակ, քանի դեռ չես կատարել տնային հանձնարարությունները»: Ինչին աշակերտը պատասխանեց. «Կարող եք ամեն օր երկու դնել»:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԼՈՒԾՈՒՄ

Անընդհատ աշակերտին երկու նշանակել տարբերակ չէ, դասից հետո արժեր թողնել աշակերտին և պարզել այդ վարքի պատճառը, դա կարող է լինել ավելի լուրջ, քան թվում է, միգուցե նա խնդիրներ ունի տանը կամ դպրոցում: Կամ կա մեկ այլ տարբերակ՝ աշխատել տղայի հետ, օգնել նրան հասկանալ անհասկանալի թեմաներ, տալ ինչ-որ

լրացուցիչ լուծման՝ նախկինում ձեռք բերված անբավարար գնահատականները շտկելու համար և աշակերտին համակարգված նվաստացնելը ոչ մի արդյունք չի տա, նրա ինքնագնահատականը էլ ավելի կընկնի: Եթե աշակերտի հետ զրույցները չեն օգնում, կարող եք ներգրավել ծնողներին, որպեսզի նրանք նույնպես մասնակցեն և նպաստեն այս խնդրի լուծմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ՝ մոտիվացիան գործողության ազդակ է,հոգեֆիզիոլոգիական գործընթաց, որը վերահսկում է մարդու վարքը, սահմանում է դրա ուղղությունը, կազմակերպումը, գործունեությունը և կայունությունը, անձի կարողությունը ակտիվորեն բավարարելու իր կարողությունները : Սոցիալական լայն շարժառիթներից առաջատարը դառնում է սովորողների ցանկությունը՝ գտնել իրենց տեղը դասարանում ընկերների շրջանում: Պարզվել է, որ սովորողների հետ լավ սովորելու ցանկությունն ամենից շատ պայմանավորված է նրանց ընկերների պահանջների մակարդակում լինելու,նրանց հեղինակությունը իրենց գործունեության որակով նվաճելու ցանկությամբ: Միևնույն ժամանակ այս տարիքի սովորողների շրջանում անկարգապահ վարքագծի,ուրշների նկատմամբ թշնամական վերաբերմունքի,նրանց մոտ բնավորության բացասական գծերի ի հայտ գալու ամենատարածված պատճառը ուսումնառության ձախողումն է : Ուսումնական գործընթացը բովանդակային առումով,նյութի մատուցման ձևով պետք է լինի ճկուն և հետապնդի ուսուցման հիմնական խնդիրներից մեկը՝ սովորողների գիտելիքների յուրացումը դարձնել տևական ,բովանդակալից,իսկ բուն ուսումնառությունը՝ ցանկալի,ուրախություն պատճառող:Մոտիվացիայի կայուն մակարդակի առաջացումը նպաստում է երեխայի այնպիսի տեսակի կրթական գործունեության մեջ ընդգրկելու հնարավորությանը, որտեղ նա կարող է հասնել հաջողության և միևնույն ժամանակ, որտեղ կա դժվարություններ և խոչընդոտներ հաղթահարելու զգացում: Մոտիվացիայի կայուն մակարդակի առաջացումը նպաստում է երեխայի այնպիսի տեսակի կրթական գործունեության մեջ ընդգրկելու

հնարավորությանը, որտեղ նա կարող է հասնել հաջողության և միևնույն ժամանակ, որտեղ կա դժվարություններ և խոչընդոտներ հաղթահարելու զգացում:Ուսուցիչը պետք է անընդհատ դրական հուզական մթնոլորտ պահպանի դասարանում,դրա համար անհրաժեշտ է ամրապնդել աշակերտի վստահությունը իրենց ունակությունների նկատմամբ ,նվազեցնել սթրեսի բացասական ազդեցությունը թեստերի ժամանակ, բոլոր տեսակի միջամտությունների և հոգնածության ժամանակ ստեղծել հաջողության իրավիճակ ,որը հնարավոր է ուսուցչի և աշակերտի համագործակության և փոխադարձ հարգանքի շնորհիվ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ա.Նալչաջյան.Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, Երևան, 1991

2.Ֆ.Ե. Թունյան , Լ.Մ.Երիցյան.Կրտսեր դպրոցականի հոգեբանություն, Երևան, 2013

3.Ութ գործոններ, որոնք ազդում են ուսանողների դրդապատճառի վրա կրթության մեջ, հրատ.: 2020թ

4. Ն.Հակոբյան, Ս.Գևորգյան ,Ա.Հովհաննիսյան, Ա. Դավթյան. Մանկավարժական հաղորդակցում, Երևան, 2010

5.Դրական հոգեբանություն, Կրթության դրդապատճառը. Ինչն է պետք մեր երեխաներին խթանելու համար, հրատ.: 2020թ.

6.Սուխոմլինսկի Վ.Ա. <<Սիրտս տալիս եմ երեխաներին>>